տաց ողորմութիւն տաք՝ դուք մեր եղբայրներն էք կրօնի մէջ եւ մեր հովանաւորութիւնն կը վայելէք։ Ով իւր երեսը Աստուծուց, նորա մարգարէից, նորա գրքերից եւ նորա ժողովրդից դարձնէ, մենք նորան բացէիբաց պատերազմ կը յայտարարենք, որովհետեւ Աստուած չի սիրէ անհաւատարիմներին։ Վկայ են՝ Աբդուլրահման Ի. Խալիդ, Հաջջաջ եւ Իյադ, գրեց Ռաբահ։ Ես վկայ կը կոչեմ Աստուծուն, նորա հրեշտակները եւ հաւատացեալներին. Աստուած իբրեւ վկայ բաւական է„։

(2804) 24 Թ. Վալիդ Ի. Օքբայ արշաւեց Ատրպատականի եւ Հայոց վերայ, որովհետեւ բնակիչք խզեցին խաղաղութեան պայմանները, որ նոքա հաստատել էին Օմարի ժամանակ խալիֆականների հետ։ Այսպէս կ'աւանդէ Աբի Միխնաֆ, իսկ ըստ այլոց՝ այս արշաւանքը տեղի ունեցաւ 26 Թ.

Հիշամ Ի. Մուհամմէդ կը պատմէ ըստ աւանդութեան Աբի Միխնաֆի, թէ Վալիդ Ի. Օքբայ (որ ամիրապետ Օսմանի ժամանակ Կուֆայի կառավարիչն էր) արշաւեց Ատրպատականի եւ Հայոց վերայ. իւր մօտ կոչելով Սալման Ի. Ռաբիայ Բահլիին, նա ուղարկեց նորան իւր առաջապահ գնդի հետ, իսկ ինքն ամբողջ զօրքով առաջ ընթացաւ եւ մտաւ Ատրպատական, ի նկատի ունենալով անցնել Հայաստան։ Նորա հրամանով Աբդուլլահ Ի. Շուբայլ Ի. Աֆվ Ահմասի 4000 զօրքով ասպատակեց Մուշան, Բաբար[1] եւ Թայլասան, վնասեց բնակչաց գոյքին եւ աւարի առաւ. ժողովուրդը թագնւեցաւ նորանից, իսկ նա գերեց նոցանից շատերին եւ եկաւ Վալիդ Ի. Օքբայի մօտ. վերջինս խաղաղութիւն կապեց Ատրպատականի բնակչաց հետ՝ 800.000 դրամ վճարելու

---

1 Jakuṭ ունի تبريز Tapriz (I, 174) գրութիւնն, որ աւելի հաւանական կը թուի։